Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆինանսներ

Մարզի թվով ութ համայնքների 2018 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեների եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 439.5 մլն. դրամ, որը եռամսյակի համար նախատեսվածից ավել է 18.0 մլն դրամով, կամ կատարվել է 104.3%-ով, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 179.3 մլն. դրամ կամ կատարվել է 108,6%-ով:

2017 թվականի առաջին եռամսյակի ցուցանիշների համեմատությամբ 2018 թվականի սեփական եկամուտներն ավել են հավաքագրվել 29.7 մլն.դրամով կամ 19,8%-ով:

Մարզի համայնքների 2018 թվականի տեղական բյուջեների եկամուտների ընդամենը եկամուտները պլանավորվել է 1 մլրդ. 955 մլն. դրամ, իսկ սեփական եկամուտները՝ 901.6 մլն. դրամ: 2018 թվականի մարզի համայնքների սեփական եկամուտների հանրագումարը 2017 թվականի փաստացի հավաքագրված եկամուտների համեմատությամբ նախատեսվել է ավել հավաքագրել 175,0 մլն. դրամ կամ 24,1%-ով ավելին:

2018 թվականին սոցիալական ծախսերին ուղղված գումարը տեղական բյուջեների ընդամենը ծախսերի մեջ կազմում է ՝ 1.8%, որը պակաս է նախորդ տարվանից 1,86%-ով:

2018 թվականին աղբահանությունից մուտքերը նախատեսվել է 82.8 մլն.դրամ, որից առաջին եռամսյակի համար՝ 14.8 մլն դրամ, հավաքագրումը կազմել է 13.1 մլն. դրամ կամ 88.2 %:

2018 թվականի առաջին եռամսյակի սանմաքրման և աղբահանության ծախսը կազմել է 38.2 մլն. դրամ, որից 25.4 մլն. դրամը ուղղվել է աղբահանությանը: Աղբահանության համար հավաքագրված գումարները կազմել են՝ աղբահանությանն ուղղված ծախսերի ընդամենը 51.6%-ը:

2018 թվականին համայնքների բյուջեների ֆոնդային մասը կազմում է ՝ 484,1 մլն. դրամ:

2016 թվականին մարզի բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը կազմել է՝ 9,6 հազար դրամ, 2017 թվականին՝ 12,0 հազար դրամ, իսկ 2018 թվականի առաջին եռամսյակի համար կազմել է 15.0 հազար դրամի:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության ծառայության մատուցման նպատակով մարզի համայնքներում իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.8 անգամ. 2018 թվականի ապրիլի 1-ի դրությամբ կնքվել է 717 պայմանագիր կամ իրավաբանական անձանց և տնտեսվարող

սուբյեկտների ընդհանուր թվի 90.8 տոկոսը, մյուս գործող 73 տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրերի կնքման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականի ապրիլի 15-ը:

Մարզի համայնքների տնային տնտեսությունների հետ կնքված պայմանագրերի թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.6 անգամ. 2018 թվականի ապրիլի 1-ի դրությամբ կնքվել է 8403 պայմանագիր կամ 2018 թվականի համար պլանավորված թվի 63.8 տոկոսը (տնային տնտեսությունների ընդհանուր թվի 51.1 տոկոսը), մյուս 4757 տնային տնտեսությունների հետ պայմանագրերի կնքման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականի մայիսի 15-ը:

Գյուղատնտեսություն

Կազմակերպված են սկսվել գարնան գյուղատնտեսական աշխատանքները: Ապրիլի մեկի դրությամբ կատարվել է 1100հա գարնանացան հացահատիկի ցանք, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 50հա-ով:

Գարնանացանի աշխատանքները շարունակվում են: Նախատեսվում է ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացնել 700 հեկտարով, հասցնելով 5872 հեկտարի:

Ավարտվել են խաղողի ու պտղատու այգիների էտի ու ձևավորման աշխատանքները:

Համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ճշտվել է պետական աջակցության ծրագրերով մարզի հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և սերմացուների վճարունակ պահանջարկը և ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Մարզի համայնքներում 33 պայմանագրային անասնաբուժներ իրականացնում են պետ պատվերով նախատեսված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները /դաբաղ, սիբիրախտ, բրուցելյոզ/:

Նախատեսված 2500գ կովերի արհեստական սերմնավորումից ՌԶԳ ՀԿ-ի և <<ՔԱՐԴ>> -ի կողմից արդեն կատարվել է 320գ կովերի արհեստական սերմնավորում:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար տրամադրված 20կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով Արենի համայնքի 3 բնակավայրերում 250հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ:

Լիզինգային եղանակով Ջերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրում ձեռք է բերվել երկու միավոր գյուղտեխնիկա /ՈՒրալեց և Բելառուս /:

<<Եղեգնաձոր>> ՋՕԸ-ի կողմից վերանորոգվել և մաքրվել են միջտնտեսային և ներտնտեսային նշանակության ոռոգման ցանցերը: Ներքին գոտու տնտեսություններում արդեն սկսվել են ոռոգման աշխատանքները:

2018թ ծրագրով նախատեսվել է կառուցել 5 սառնարանային տնտեսություն 220տ տարողությամբ, հաշվետու ժամանակահատվածում կառուցվել է 2 սառնարանային տնտեսություն 30տ տարողությամբ:

2018թ ծրագրով նախատեսվել է հիմնել 25 հա պտղի և խաղողի այգիներ, արդեն հիմնվել է 49հա, որից պտուղ՝ 24հա, խաղող՝ 25հա: Աշնանը նախատեսվում է հիմնել ևս 13հա այգի/5հա պտուղ, 8հա խաղող/:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական բյուջե -20000,0 հազ. դրամ, որից՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատվությամբ Վայք քաղաքում բազմաբնակարան շենքի կառուցումը 2018թ-ի համար նախատեսված 240 000.0 հազ. դրամի շին.մոնտաժային աշխատանքներից կատարված է առ. 01.04.2018թ-ի դրությամբ 20 000,0 հազ. դրամի:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ- 25 000,0 հազ. դրամ, որից՝

1. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՋ-ի կառուցում – 5 000,0 հազ. դրամ:
2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրում մանկապարտեզի վերակառուցում և կոյուղու կառուցման շարունակություն -20 000 հազ. դրամ:

Համայնքային բյուջե

Արենի համայնքի-9211.0 հազ. դրամ

(ներհամայնքային ճանապարհների, ոռոգման համակարգերի խմելու ջրի ջրագծերի նորոգում, մանկապարտեզի, վարչական շենքի, մշակույթի տան մասնակի նորոգում)

Եղեգիս համայնքի-11500.0 հազ. դրամ

(Քլորակայանի կառուցում, տնտեսական շինության (անասնագոմի) կառուցում)

Զառիթափ համայնք -27 000,0 հազ. դրամ

(մեքենատրակտորային կայանի կառուցում, խմելու ջրի ջրագծերի նորոգում)

Գլաձոր համայնք -250,0 հազ. դրամ

(Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզի կոյուղու հորի և ցայտաղբյուրի կառուցում)

Մասնավոր ներդրումներ-141400.0 հազ. դրամ

(հյուրանոցների և հանդիսությունների սրահների, առևտրի սրահների, առանձնատան, ավտոտեխսպասարկման կետի և արևային կայանի կառուցում)

Ընդամենը – 234361.0 հազ. դրամ

1. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ

Ամուլ սարի ոսկու հանք – 22800000.0 հազ. դրամ

Ընդամենը - 22800000.0 հազ. դրամ

Ճանապարհաշինություն

2018թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում առաջին երեք ամիսների ընթացքում իրականացվել է 267 կմ ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանության աշխատանքներ 63.5 մլն. դրամ, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում իրականացվել է 146.3 կմ ձմեռային և ընթացիկ պահպանության աշխատանքներ 37 մլն. դրամ:

2018թ. առաջին եռամսյակում կազմվել է 2019 – 2021թթ. մարզային /տեղական/ և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտը:

2018 թվականին մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

1.Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 140-րդ կիլոմետրում 100 մետր հենապատի կառուցում - 180 մլն. դրամ / մրցութային փուլում է/

2.Մ2 – Արենի – Խաչիկ – Գնիշիկ – Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի 63 /30 մլն. դրամ/ և 68-րդ/40 մլն. դրամ/ կիլոմետրերում կամուրջների վերանորոգում -70 մլն. դրամ / մրցութային փուլում է/

3.Գնդևազի ներհամայնքային փողոցների բարեկարգում - 80 մլն. դրամ /մրցութային փուլում է/

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ ճանապարհները

1.Մ2 – Կարմրաշեն ավտոճանապարհի Մ2 – Հերհեր 11.7 կմ ճանապարհահատվածը - 1275.3 մլն. դրամ /աշխատանքներն սկսվել են/

2.Մ2 – Գետափ 2.2 կմ - 280 մլն. դրամ /նախագծման փուլում է/

3.Տ – 9 – 21 /Շատին/ - Հորբատեղ 6 կմ - 700 մլն. դրամ /նախագծման փուլում է/

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզում գործում է 48 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 6306 աշակերտ: Աշխատում են 1056 ուսուցիչներ, որոնցից 971-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 92%-ը), մնացած 85-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

ՈՒսումնաօժանդակ անձնակազմի աշխատողների թիվը 454 է:

Հաջողությամբ իրականցվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների 2399 երեխաներ դպրոցում ստանում են սնունդ:

Գործում են 25 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում:

2018թ. նախատեսվում է բացել ևս 8 նախակրթարան:

Մարզի 10 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որոնցում ընդգրկված է 155 երեխա:

Անցկացվել է 2017-2018 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: 16 առարկաներից մարզային փուլին մասնակցել են 8-րդ-ից 12-րդ դասարանների 579 աշակերտներ: Նրանցից 51-ը իրավունք են ստացել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Անցկացվել է դպրոցականների 2 տարիքային խմբերի (1-3-րդ դասարաններ և 4-7-րդ դասարաններ) սպորտլանդիայի տարածաշրջանային փուլը, որին մասնակցել են 330 աշակերտներ: Մարզային փուլին մասնակցելու իրավունք են ստացել Ջերմուկի թիվ 3 միջն. Վայքի հիմնական, Զառիթափի միջն. Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Արենիի միջն. դպրոցների թիմերը:

Մարզի 17 մանկապարտեզներից գործում է 15-ը, որոնցում ընդգրկված է 1145 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակներ 42 խմբով:

Մարզի 4 համայնքներում գործում են մարզադպրոցներ, որտեղ աշխատում են 13 մարզիչներ, ընդգրկված են 375 երեխաներ:

Կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացման նպատակով կազմվել է միջոցառումների ծրագիր:

Առողջապահություն, սոցիալական ոլորտ

-Մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորումը 2017թ.-ին կազմել է 611 369.5 հազար դրամ,իսկ 2018թ.ին՝ այն կազմում է 580518.5հազ.դրամ: Գլոբալ բյուջեն պակասել է 30851.0հազ դրամով կամ 5%-ով:

-Վայոց ձորի մարզի բժշկական հաստատությունների վճարովի ծառայությունները 2018թ.-ի առաջին եռամսյակում կազմել են 12480.3հազ. դրամ ,2017թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 3622.8հազ. դրամով կամ 29%-ով: Նախատեսվում է

2018թվականին վճարովի ծառայությունները հասցնել 80.7 մլն. դրամի, որը կազմում է տարեկան գլոբալ բյուջեի 14%-ը,իսկ 2017թվականի կատարողականի նկատմամբ աճը կազմելու է 40 տոկոս:

-2017թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում նպաստ են ստացել 1973 ընտանիք, գումարը կազմել է 172.4մլն.դրամ , 2018 թվականի առաջին եռամսյակում՝ 1964 ընտանիք , վճարվել է 172.3 մլն դրամ : Մարզում կենսաթոշակառուների թիվը 10111 է, որից 4047-ը՝ հաշմանդամության:2017թ.-ին կենսաթոշակառուները 10245 են եղել , որից 4231-ը՝ հաշմանդամության: 2018թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է 1մլրդ 219մլն դրամ կենսաթոշակ,2017թ.-ի նույն ժամանակաշրջանում 1մլրդ 227մլն դրամ՝ պակաս է 8մլն.դրամով, որն արդյունք է հաշմանդամություն ունեցողների թվի պակասով՝ 3-րդ խմբի շատ հաշմանդամներ զրկվել են հաշմանդամության կարգից:

- Մարզի Զբաղվածության Տարածքային Կենտրոններում 2018թ. առաջին եռամսյակում գրանցվել են 972 գործազուրկները , որը 2017թ.-ի նույն ժամանակաշրջանում գրանցված 1559 –ի համեմատ պակաս է 632-ով կամ 40%-ով :

- 2017թ.-ին առաջին եռամսյակում աշխատանքի են տեղավորվել 71 մարդ, 2018թ-ի հաշվետու ժամանակաշրջանում՝ 85 մարդ: Աշխատանքի տեղավորվածների թիվը ավելացել է 14-ով կամ 20%-ով:

Զբոսաշրջություն

2018թ. առաջին եռամսյակում զբոսաշրջիկների թիվը մարզում կազմել է 13 000 մարդ, որը նախորդ տարվանից ավել է 7.5 %-ով: Ստեղծվել են 7 մշտական աշխատատեղ: 2018թ. ակնկալվում է, որ զբոսաշրջիկների թիվը կհասնի 50000-ի:

Մարզում գործում են 62 հյուրանոցային տնտեսություն, որոնցից 23-ը հյուրանոցներ են, 8-ը ՝առողջարաններ, 31-ը՝ հյուրատներ: Մարզում գործում են 8 գինու համտեսի սրահներ, որոնցից 6-ը գտնվում են գինու արտադրամասերում:

Սկսվել է Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «20 անիրական իրականություն» ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզի պատմամշակութային հուշարձանները և հատուկ պահպանվող 5 տարածքները զբոսաշրջության վայր դարձնելու ծրագիրը, որը կավարտվի 2019թ.: Ընթացքի մեջ է Թուֆենկյան հիմնադրամի կողմից կառուցվող «Արենիի գինու ռեզորդը»՝ 4 մլրդ 620 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից 400 մլն դրամը կներդրվի 2018թ.: